# ԿԱՊԻՏԱԼ ԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N<<ԵՔ-ԳՀ ԱՇՁԲ-23/48-1>**

ք.Երևան ____________________ «10» ապրիլի 2023թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժ/պ Գ.Մուրադյանի,որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊ և «ԲԱԳՐԱՏՈՒՆԻ» ԱԿընկերությունները /Կոնսորցիում/, ի դեմս ««ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ տնօրեն Ն. Խաչատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ինչպես նաև կոնսորցիումի 12.03.2023 թվականին թիվ 23/2 կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետև՝Կապալառու), մյուս կողմից,կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1

Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի տարածքում բազմաբնակարան շենքերի թեք տանիքների կապիտալ վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝Համաձայն հավելված 2:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

## 2.ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով,շինարարական նյութերով և միջոցներով:

2.2

Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1.Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1

Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել ովթերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4

Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5

Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2

Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3

Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների

համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնել և նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագիրը լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[28.1]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 **աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5

Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմանի ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը`

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրությունն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը` Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում` վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8317320 (ութ միլիոն երեք հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 1386220 (մեկ միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամը` ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդորում`

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված` առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների` պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի (Համաձայնագրի) վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում` սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,18 (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից

աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք` պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 20 (քսան) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| *N* | *Խախտումը* | *Պատասխանատվությունը* |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը | Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով |
| 2 | Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը | Տուգանք - Պայմանագրային գնի 0.5% չափով |
| 3 | Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը | Տուգանք - Պայմանագրային գնի 0,5% չափով |

6.6

Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակի չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

8.2 Պայմանագրիցծագած՝ կողմիվճարայինպարտավորություննըչիկարողդադարելայլպայման ագրիցծագած՝ հակընդդեմպարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքըչիկարողփոխանցվելայլա նձի,առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ),կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը,եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրըլուծվելէ:

8.4 ՊայմանագրիհետկապվածվեճերըենթակաենքննությանՀայաստանիՀ անրապետությանդատարաններում:

8.5 Պայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկ ատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝ համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀայաստանիՀանրապետությանկառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի)պայմանագիր կնքելու միջոցով, ապաայդպայմանագրիմասնակիցներըկրումենհամատեղևհամապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվությանմիջոցները:

8.8Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրովայդժամկետըլրանալը՝Կապալառուիառաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30օրացուցային օրով,բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու)օգուտները (խնայողություններ)կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12
Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքի Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմը**:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պատվիրատու** | **Կապալառու** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ |
| ք.Երևան 0015, Արգիշտի փ. 1 | ՀՀ,Լոռի,Վանաձոր, ,Երևանյան խճ. 68 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ-«Ինեկո բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900032313166 | Հ/Հ - 2050222188661001 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ - 06965254 |
| Գ.Մուրադյան ---------------- | Տնօրեն-----------------Ն Խաչատրյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | /ստորագրություն/ |
| | Կ.Տ |

Հավելված 1

«10»ապրիլի 2023թ.Կնքված աշխատանքների կատարման թիվ <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/48-1>>գնմանպայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

Շինարարությանանվանումը Արաբկիրվ/Շբազմաբնակարանշենքերիթեք տանիքների վերանորոգմա նաշխատանքներ

Կիևյան 18 շենք,1-ին և 2-րդմուտքեր

| N | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Ծավալը | Միավորի արժեքը (հազար դրամ) | Ընդհանուր արժեք / հազար դրամ / | Ընդհանուր արժեք (տոկոս) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 5 | | | |
| | Քանդման աշխատանքներ | | | | | |
| 1 | Ասբոիերձաքարից և ցինկապատ թիթեղից տանիքի ծածկույթի քանդում | մ$^2$ | 630.0 | 0.2 | 126.000 | |
| 2 | Մանր ծածկույթների քանդում սև հարթ թիթեղից | մ$^2$ | 16.0 | 0.2 | 3.200 | |
| 3 | Սև թիթեղից ջրհորդանների և ցվիքների ապամոնտաժում | մ$^2$ | 70 | 0.2 | 14.000 | |
| 4 | Սև թիթեղից ջրատար խողովակների ապամոնտաժում D=100մմ | մ | 126 | 0.2 | 25.200 | |
| 5 | Փայտե կավարամածի քանդում(Ընդհանուր մակերեսի 30%) | մ$^2$ | 189.0 | 0.2 | 37.800 | |
| 6 | Փայտե տախտակամածի քանդում (Ընդհանուր մակերեսի 30%) | մ$^2$ | 21 | 0.2 | 4.200 | |
| 7 | Փայտե կոնստրուկցիաների քանդում հետագայում օգտագործման նպատակով | մ$^3$ | 2.2 | 12.000 | 26.400 | |
| 8 | Ձեղնահարկի լուսամուտների քանդում | հատ | 1 | 3.500 | 3.500 | |
| 9 | Տանիքում առկա ալեհավաքների ապամոնտաժում և մոնտաժում | հատ | 55 | 5.000 | 275.000 | |
| 10 | Տանիքում առկա և քանդումից գոյացած շին աղբի մաքրում ձեռքով | տ | 85 | 1.000 | 85.000 | |
| 11 | Շին աղբի ձեռքովբարձումմ/ինքնաթափ | տ | 85 | 0.650 | 55.250 | |
| 12 | Շին աղբի տեղափոխում 13կմ | տ | 85 | 0.650 | 55.250 | |
| | Ընդամենը՝ 1 | | | | 710.800 | 10.26 |
| | Կառուցման աշխատանքներ | | | | | |
| 1 | Տանիքի ծածկույթի պատրաստում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից 0,55մմ հաստ.,KP-25 ներառյալ 30% նոր փայտե կավարամածը | մ$^2$ | 630.0 | 7.000 | 4410.000 | |
| 2 | Գագաթաթիթեղների պատրաստում ցինկապատ հարթ թիթեղից 0,55մմ հաստ. | մ$^2$ | 28.0 | 4.000 | 112.000 | |
| 3 | Մանր ծածկույթներ ցինկապատ հարթ թիթեղից 0,55մմ հաստ. | մ$^2$ | 16 | 4.000 | 64.000 | |
| 4 | Ձեղնահարկի լուսամուտների ծածկում ցինկապատհարթթիթեղից 0,55մմհաստ. | մ$^2$ | 5.6 | 4.000 | 22.400 | |
| 5 | Ջրհորդանի և ցվիքի պատրաստում ցինկապատ հարթ թիթեղից 0,55մմ հաստ., ներարյալ 30% նոր փայտե տախտակամածը | մ | 100.0 | 5.000 | 500.000 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6 | Ջեղնահարկի լուսամուտների պատրաստում շերտափեղկերով | հատ | 1.0 | 5.000 | 5.000 | |
| 7 | Ջրատար խողովակների տեղադրում ցինկապատ հարթ թիթեղից 0,55մմ հաստ D=150մմ,L=18մ | կ-տ | 7.0 | 6.000 | 42.000 | |
| 8 | H=50մմ հաստ. խարամի փռում | մ$^3$ | 35.0 | 4.500 | 157.500 | |
| 9 | Փայտե կոնստրուկցիաների ուժեղացում և լրացում նոր փայտանյութով | մ$^3$ | 1.1 | 160.000 | 176.000 | |
| 10 | Փայտե կոնստրուկցիաների տեղադրում և լրացում գոյություն ունեցող փայտանյութով | մ$^3$ | 2.2 | 40.000 | 88.000 | |
| 11 | Փայտե կավարամածի և տախտակամածի հակահրդեհային և հականեխիչ պաշտպանություն | մ$^2$ | 700.0 | 0.400 | 280.000 | |
| 12 | Փայտե կոնստրուկցիաների ամրացում մետաղական էլեմենտներով | տ | 0.14 | 430.000 | 60.200 | |
| 13 | Օդափոխության բլոկների միացման կարրերի և պաշտպանիչզլխադիրներիտեղադրումց ինկապատհարթթիթեղից 0,55մմհաստ. | մ$^2$ | 20 | 3.000 | 60.000 | |
| 14 | Շերտապողպատ 40x4մմ | տ | 0.12 | 430.000 | 51.600 | |
| 15 | Ռետինե ներդիր | կգ | 45 | 1.000 | 45.000 | |
| 16 | Օդափոխության բլոկների սվաղ ց/ավազե շաղախով մետաղական ցանցի վրա | մ$^2$ | 22 | 1.000 | 22.000 | |
| 17 | Մետաղական ճաղաշարի ուժեղացում | տ | 0.22 | 430.000 | 94.600 | |
| 18 | Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ յուղաներկում | մ$^2$ | 75 | 0.400 | 30.000 | |
| | Ընդամենը`2 | | | | 6220.300 | 89.74 |
| | Ընդամենը`1-2 /հազ. դր./ | | | | 6931.100 | 100.00 |
| | ԱԱՀ 20% | | | | 1386.220 | |
| | Ընդամենը /հազ. դր./ | | | | 8317.320 | |

## Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

Գ ն մ ա ն ա ռ ա ր կ ա Է հ ա ն դ ի ս ա ն ո ւ մ Ե ր և ա ն ք ա ղ ա ք ի Ա ր ա բ կ ի ր վ ա ր չ ա կ ա ն շ ր ջ ա ն ի բ ա զ մ ա բ ն ա կ ա ր ա ն շ ե ն ք ե ր ի թ ե ք տ ա ն ի ք ն ե ր ի վ ե ր ա ն ո ր ո գ մ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը :

Ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը պե տք Է ի ր ա կ ա ն ա ց վ ե ն ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ի թ ե ր ո ւ թ յ ա ն ա կ տ ե ր ո վ ն ա խ ա տ ե ս վ ա ծ ծ ա վ ա լ ն ե ր ի ն և ձ և ի ն հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն :

ա / ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը պե տք Է ս կ ս վ ե ն ի հ ի ն ք ա յ ք ա յ վ ա ծ ծ ա ծ կ ի ք ա ն դ ո ւ մ ո վ

բ /

ք ա ն դ մ ա ն ժ ա մ ա ն ա կ տ ե ս ա կ ա վ ո ր ե լ ծ ա ծ կ ի ն յ ո ւ թ ը և պի տ ա ն ի ծ ա ծ կ ո ւ յ թ ը տ ա ն ի ք ո ւ մ դ ա ս ա վ ո ր ե լ ա յ ն պե ս ,

ո ր ն ո ր ո գ մ ա ն ժ ա մ ա ն ա կ ա ր ա գ և ա ն վ ն ա ս օ գ տ ա գ ո ր ծ վ ի :

գ / շ ե ն ք ի շ ր ջ ա կ ա յ ք ո ւ մ պե տք Է տ ե ղ ա դ ր վ ի ա ր գ ե լ ա փ ա կ ո ց ն ե ր

դ / ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը ս կ ս ե լ 8-ի ց մ ի ն չ և 18-ը :

1

Մ ր ց ո ւ յ թ ի ն մ ա ս ն ա կ ի ց կ ա զ մ ա կ ե ր պո ւ թ յ ո ւ ն ը գ ն ի ա ռ ա ջ ա ր կ ը ս ա հ մ ա ն ե լ ո ւ ն պ ա տ ա կ ո վ ի ր ա վ ո ւ ն ք ո ւ ն ի ն ա խ ո ր ո ք ա յ ց ե լ ե լ ո ւ շ ի ն ի ր ա պ ա ր ա կ :

2

Վ ե ր ա ն ո ր ո գ մ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը պե տք Է ս կ ս վ ե ն պ ա յ մ ա ն ա գ ր ի հ ա ս տ ա տ մ ա ն պ ա հ ի ց 2/ե ր կ ո ւ / ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն օ ր վ ա ը ն թ ա ց ք ո ւ մ :

3
Ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը ի ր ա կ ա ն ա ց ն ո ղ ք ա ն վ ո ր ն ե ր ը պ ե տ ք է ո ւ ն ե ն ա ն հ ա մ ա պ ա տ
ա ս խ ա ն ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն փ ո ր ձ ,ի ս կ ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը ի ր ա կ ա ն ա ց ն ե լ ո ւ ժ ա մ
ա ն ա կ պ ե տ ք է կ ր ե ն ի ա տ ո ւ կ ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն վ ե ր ն ա զ գ ե ս տ ,
պ ա հ պ ա ն ե լ ո վ ա ն վ տ ա ն գ ո ւ թ յ ա ն կ ա ն ո ն ն ե ր ը :
4.Ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը կ ա տ ա ր ե լ ե ր ե ք փ ո ւ լ ե ր ո վ`
ա /
ա ռ ա ջ ի ն փ ո ւ լ ո ւ մ կ ա տ ա ր ե լ պ ա յ մ ա ն ա գ ի ր ը ո ւ ժ ի մ ե ջ մ տ ն ե լ ո ւ օ ր վ ա ն ի ց ս կ ս ա ծ 30
օ ր ա ց ո ւ ց ա յ ի ն օ ր ո ւ մ պ ա յ մ ա ն ա գ ր ա յ ի ն ա մ բ ո ղ ջ ծ ա վ ա լ ի ա ռ ն վ ա զ ն 30%-ը
բ /
ե ր կ ր ո ր դ փ ո ւ լ ո ւ մ կ ա տ ա ր ե լ պ ա յ մ ա ն ա գ ի ր ը ո ւ ժ ի մ ե ջ մ տ ն ե լ ո ւ օ ր վ ա ն ի ց ս կ ս ա ծ 100-
ր դ օ ր ա ց ո ւ ց ա յ ի ն օ ր ո ւ մ պ ա յ մ ա ն ա գ ր ա յ ի ն ա մ բ ո ղ ջ ծ ա վ ա լ ի ա ռ ն վ ա զ ն 90%-ը
գ /
ե ր ր ո ր դ ա վ ա ր տ ա կ ա ն փ ո ւ լ ո ւ մ մ ի ջ ն ա պ ա յ մ ա ն ա գ ր ի վ ե ր ջ ն ա ժ ա մ կ ե տ ը կ ա տ ա ր ե լ մ ն ա ց ա ծ ա շ խ ա տ ա ն ք ն ե ր ը 100%-ո վ :

**Պ ա տ վ ի ր ա տ ո ւ**
Ե ր և ա ն ի ք ա ղ ա ք ա պ ե տ ա ր ա ն
ք .Ե ր և ա ն 0015,Ա ր գ ի շ տ ի ի փ. 1
Կ ե ն տ ր ո ն ա կ ա ն
գ ա ն ձ ա պ ե տ ա ր ա ն
Հ /Հ 900032313166
Հ Վ Հ Հ 02593108

Գ .Մ ո ւ ր ա դ յ ա ն ------------------------
(ս տ ո ր ա գ ր ո ւ թ յ ո ւ ն) Կ.Տ

**Կ ա պ ա լ ա ռ ո ւ**
«ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ
ՀՀ,Լոռի,Վանաձոր, ,Երևանյան խճ. 68
Բանկ-«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ - 2050222188661001
ՀՎՀՀ - 06965254

Տնօրեն-----------------Ն Խաչատրյան

Հավելված թիվ 2
«10» ապրիլի 2023թ. կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/48-1>> գնման պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կիևյան 18 բազմաբնակարան շենքի թեք տանիքների կապիտալ վերանորոգման աշխատանքների | *Սույն աշխատանքների պայմանագիրըն տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից* | *120-րդ օրացուցային օրը ներառյալ* |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտի փ.1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313166
ՀՎՀՀ 02593108

Գ.Մուրադյան ____________________
(ստորագրություն) Կ.Տ.

**Կապալառու**
«ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ
ՀՀ,Լոռի,Վանաձոր, ,Երևանյան խճ. 68
Բանկ-«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ - 2050222188661001
ՀՎՀՀ - 06965254

Տնօրեն-------------Ն Խաչատրյան

Հավելված N3
« 10 » ապրիլի 2023թ. կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/48-1>> գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում ** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 45261124/11 | Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կիևյան 18 բազմաբնակարան շենքի թեք տանիքների կապիտալ վերանորոգման աշխատանքների | ----- | ----- | --- | 4 158 660 | 4 158 660 | 4 158 660 | 8 317 320 | 8 317 320 | 8 317 320 | 8 317 320 | 8 317 320 | 8 317 320 | 8 317 320 |

*Վճարման ենթակագումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ.1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313166
ՀՎՀՀ 02593108

Գ.Մուրադյան ______________
(ստորագրություն) Կ.Տ.

**Կապալառու**
«ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ
ՀՀ,Լոռի,Վանաձոր, ,Երևանյան խճ. 68
Բանկ-«Ինեկո բանկ» ՓԲԸ
Հ/Հ - 2050222188661001
ՀՎՀՀ - 06965254

Տնօրեն-------------Ն Խաչատրյան

Հավելված թիվ 4
«10» ապրիլի 2023թ. Կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/48-1>> գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ________ ____ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ____________________ . | հվհհ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___»«______________»20թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »« » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«10» ապրիլի 2023թ. Կնքված աշխատանքների կատարման*
*թիվ <<ԷՔ-ԳՀԱԾՁԲ-23/48-1>> գնման պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________________________-ին կնքված N__ ________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| | հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(որակավորման ապահովում)**

ք.Երևան «10» ապրիլի 2023թ.**

*« ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ »* *ՍՊԸ* ի դեմս Ընկերության տնօրեն Նարեկ Խաչիկի Խաչատրյանի /ն/բ 013841879, տրված է՝ 08/06/2022 066-ի կողմից/________, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի ___* (այսուհետ՝Պատվիրատու)կողմից կազմակերպված՝ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/48*ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը,Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելի իրեն համաձայնվում է,որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրըէլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավորձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ ՔրեդիթՌեփորթինգ>>ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռքչբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3.Ընկերության հասցեն,բանկային վավերապայմանները՝

**Կապալառու**

*« ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ » ՍՊԸ*

ընկերության անվանումը

ք Վանաձոր Երևանյան խճ 68

ընկերության հասցեն

<<Ինեկոբանկ>>ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

______________________ Նարեկ Խաչատրյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

10/04/2023թ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ *

ռվ

Ներկայացման ամսաթիվը`"___"___20___թ.

Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն` *«ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ*

Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)` <<Ինեկոբանկ>>ՓԲԸ

Վճարողի հաշվի համարը`2050222188661001

Վճարողի ՀՎՀՀ` 06965254

Վճարողի ՀԾՀ`

Ստացողի անվանումը,կամ անուն ազգանուն` **Երևանի քաղաքապետարան**

Ստացողի ՀԾՀ (չի լրացվում)

Ստացողի ՀՎՀՀ`02593108

Ստացողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)`**Կենտրոնական գանձապետարան**

Ստացողի հաշվի համարը (հշ.N)900015211429

Գումարը (թվերով և բառերով)`

441/մեկ միլիոն վեց հարյուր ութանասուն յոթ հազար չորս հարյուր քառասուն

Ակցեպտավորված գումարը` (թվերով և բառերով)(Նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

Արժույթը (բառերով և կոդով)` ՀՀ դրամ AMD

Գործարքի (վճարման) նպատակը`*(որակավորման ապահովման համար)*

Վճարման կատարման հիմքերը` (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում` տուժանքի համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիմքով կատարվում է գանձումը)`ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/48-1

Վճարման պայմանները` <ակցեպտավորված վճարում>

Կցորդիր էջերի քանակը` ---էջ

| | |
|---|---|
| ա.Ստացողի ստորագրությունները<br><br>/____________________/<br><br>/____________________/<br><br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունն<br><br>Ն.Խաչատրյան /____________________/<br><br>/__________<br><br>21.բ. |
| . Ստացողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>____________________/<br><br>/ստորագրություն/<br><br>Կ.Տ.<br><br>"___"___20___թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությու<br><br>/__________<br>/ստորագրություն/<br><br>23.բ. Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը` "___"__ |

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(պայմանագրի ապահովում)**

ք.Երևան «10» ապրիլի 2023թ.**

*«ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ*-ի դեմս Ընկերության տնօրեն Նարեկ Խաչիկի Խաչատրյանի /ն/p 013841879, տրված է՝ 08/06/2022 066-ի կողմից/________, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1.Համաձայնության առարկան**

1.1Ընկերությունը մասնակցում Երևանի քաղաքապետարանի ___* (այսուհետ՝Պատվիրատու)կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԱԾՁԲ-23/48* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է,որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար,քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե)Ընկերությունը սույնով համաձայնում է,որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրըէլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանց ից գարտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված

Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ ՔրեդիթՌեփորթինգ>>ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2.Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվել իք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով`

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռքչբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3.Ընկերության հասցեն,բանկային վավերապայմանները`

**Կապալառու**

*« ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ » ՍՊԸ*

ընկերության անվանումը

ք Վանաձոր Երևանյան խճ 68

ընկերության հասցեն

<<Ինեկոբանկ>>ՓԲԸ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

ՀՀ 2050222188661001

ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 06965254

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

________________ Նարեկ Խաչատրյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

10/04/2023թ

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ *** |
| 2. Թիվ | |
| 3. | Ներկայացման ամսաթիվը` "___" ___ 20___թ. |

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ` ***« ՄԵՆՔՈՆՍԹՐԱՔԹ » ՍՊԸ***

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)` <<**Ինեկոբանկ**>>ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը`2050222188661001

7. Վճարողի ՀՎՀՀ` 06965254

8. Վճարողի ՀԾՀ`

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն` **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ `02593108

12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)` **Կենտրոնական գանձապետարան**

13. Շահառուի հաշվի համարը (հշ .N)900015211429

14. Գումարը (թվերով և բառերով)` 1124961/մեկ միլիոն հարյուր քսանչորս հազար ինը հարյուր վաթսունմեկ/

15. Ակցեպտավորված գումարը` (թվերով և բառերով)(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16. Արժույթը (բառերով կոդով)` ՀՀ դրամ AMD

17. Գործարքի (վճարման) նպատակը `*(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը` (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում` տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)`ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/48-4

19. Վճարման պայմանները` <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը` ---էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները`<br>Ն.Խաչատրյան /____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ. Կատարման ամսաթիվը` "___" ___ 20___թ. |